ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«11» փետրվար 2020թ. No 556 – Ա

«ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի 14.01.2020թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաստատել՝

1. 2020թ. փետրվարի 20-21-ը ք. Երևանում ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Վինաթիե» կլինիկայի և Հայկական հոգեբուժական ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպվող «Մանկական հոգեբուժության զարգացման հեռանկարները. միջմասնագիտական համագործակցություն» թեմայով գիտաժողովի ծրագիրը համաձայն Հավելված 1-ի:

2. «Մանկական հոգեբուժության զարգացման հեռանկարները. միջմասնագիտական համագործակցություն» թեմայով գիտաժողովի մասնակիցների վկայականները վավերացնել ՀՀ առողջապահության նախարարության կնիքով:

3. Շնորհել՝

3.1. «Մանկական հոգեբուժության զարգացման հեռանկարները. միջմասնագիտական համագործակցություն» թեմայով գիտաժողովի մասնակից ավագ բուժաշխատողներին ՇՄՋ 7 տեսական կրեդիտ:

3.2. «Մանկական հոգեբուժության զարգացման հեռանկարները. միջմասնագիտական համագործակցություն» թեմայով գիտաժողովի մասնակից միջին բուժաշխատողներին ՇՄՋ 6 տեսական կրեդիտ:

4. Վկայականները վավերացման ներկայացնելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև տեղեկատվություն մասնակիցների վերաբերյալ՝ համաձայն կից ձևաչափի (Հավելված 2):

5. Վկայականները անհրաժեշտ է ներկայացնել վավերացման միջոցառման անցկացումից հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ